



Հոլանդիայի Հայ Դատի Հանձնախումբ

Հոլանդիա -2011 ապրիլի 23

Հաղորդագրություն

Ուրբաթ 22-Ապրիլի 2011-ին կայացավ Հայոց մեծ եղեռնի զոհերուն նուիրում յիշատակի երեկոյ Գ.Կիւլպենկեան սրահէն ներս, Ալմելո:
Հանդիսութեան կազմակերպիչներն էին Հոլանտայի հայ դատի յանձնախումբը և Ալմելոյի Գ. Լուսաւորիչ եկեղեցոյ ու ՀՄԸՄ-ի վարչութիւնները:

Նախքան սրահ մտնելը, ծաղկեպսակներ զետեղուեցան եկեղեցոյ շրջափակին մէջ տեղադրուած 1915-ի Հայոց ցեղասպանութեան յուշարձանի մօտ:

Հանդիսութեան ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան Տիկ. Զինիկ Աղաջանեանը, տասնեակ հայ, հոլանտացի և գերմանացի պատմաբաններ ու գիտնականներ, հարիւրաւոր հայորդիներ ու հիւրեր:

Յուշ երեկոն սկսաւ Ժամը 18-ին՝ 2 վայրկեան լռութեամբ, որմէ ետք ելոյթներով հանդէս եկան Հայաստանի Հանրապետութեան Հոլանտայի լիազօր դեսպան Տիկ. Աղաջանեանը, Բոխումի Ռուիք համալսարանի պատմութեան ֆակուլտետի դոկտոր պրոֆեսոր՝ Միհրան Դաբաղը, Հոլանդիայի Բաց Համալսարանի մշակութային գիտութիւնների դասախօս՝ դոկտոր-պրոֆեսոր Դ. Յ. Վան Դեր Դիւսսեն, Ալմելոյի Եկեղեցիներու Խորհրդի ներկայացուցիչ՝ պարոն Յապ Վան Սելմը, Գերմանիայի «Արմենիենհիլֆե» կազմակերպոյթյան նախագահ՝ դոկտոր Գունտեր Բրինկմանը և ուրիշներ: Անոնք իրենց խօսքին մէջ մերժեցին թրքական ուրացման քաղաքականութիւնը, որովհետև ցեղասպանութիւնը փաստ է կրոպացի մասնագէտներու կողմէ հաստատուած և ո՛չ թէ հայկական միակողմանի տեսակետ: Ուրացումը վնաս է նոյնիք ուրացողի համար, իսկ Հայաստան թուրքիա մերձեցման քաղաքականութիւնը՝ ժխտումի վտանգաւոր նոր ձև:

Ոգեկոչման երեկոն յազեցուած էր զեղարուեստական կոկիկ յայտագրով մը:

Այնտեղ հնչեց Ա. Արմէնակեանի ղեկավարած սիմֆոնի նուգախումբի կատարումով դասական երաժշտութիւն:
Բէմ բարձրացան նաև ՀՄԸՄ-ի արի արեւուշերը ու ներկաներուն հրամցուցին պայծառ ապագայի հաւատք ներշնչող երգեր:

Յուզող նաև գօտեպնդող զանազան այլ ելոյթներէ ետք փակման խօսքով հանդէս եկաւ հայ դատի յանձնախումբի նախագահ՝ պր. Մ. Աբրահամեան:
Ան հպարտութեան արժանի համարեց հոլանտահայ փո'քր գաղութի ձեռքբերումները և կոչ ըրաւ յառաջիկային աւելի լաւ կազմակերպուելու ու պայքարելու մինչև մեր նպատակի իրագործում՝ Ազատ , Անկախ ու Միացեալ Հայաստանի ստեղծում:

Հոլանդիայի Հայ Դատի Հանձնախումբ